ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դասախոսների թափուր տեղերի համար՝ հետևյալ մասնագիտությունների գծով

- «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ 1 (մեկ) դասախոս,
- «Կարի տեխնոլոգիա» մասնագիտությամբ 1 (մեկ) դասախոս,

Թափուր աշխատատեղին ներկայացվող պահանջներն են՝

- Դիմորդը պետք է տվյալ բնագավառում ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և (կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ,
- Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումը և մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,
- Աշխատանքային գործունեության փորձը ցանկալի է:

Մրցույթն անցկացվում է բանավոր հարցազրույցի միջոցով՝ յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Հարցաշարը կազմում է հաստատությունը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

.Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի

.Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը)

.Անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը)

.Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)

.Ինքնակենսագրություն (Ձև 4),

.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

.ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը)

.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

- Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 30 -ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 10^{00} - 15^{00} - ը ներառյալ:

Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 31- ին՝ ժամը 10 ^{00}-ին, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում:
.Հասցեն՝ ք. Վանաձոր, Հերացի 11:
.Տեղեկությունների համար զարգահարել (0322) 2-38-26 հեռախոսահամարով: